

Հարգելի նոր հիվանդ,

Ձեզ ողջունում է Meijer Specialty Pharmacy-ին (MSP): Մենք անհամբեր սպասում ենք օգնելու Ձեր առողջության կառավարման: Մեր հիվանդների խնամքի խումբը ձեզ կմատուցի ծառայություններ, որոնք անհրաժեշտ են ձեր բուժումից առավելագույն արդյունքի ձեռքբերումը երաշխավորելու համար:

Ահավասիկ մեր տրամադրած ծառայություններից մի քանիսը.



Դեղամիջոցների կրթություն

Meijer Specialty Pharmacy-ն ձեր դեղամիջոցների մասին կրթություն կմատուցի մեր առողջապահական մասնագետների խմբի միջոցով:



Ապահովագրական աջակցություն

Մենք ձեր ծածկույթի ընտրանքները հասկանալու համար կաշխատենք ձեր ապահովագրության հետ:



Նյութական աջակցություն

Meijer Specialty Pharmacy-ն կօգնի հայտնաբերել նյութական օգնության աղբյուրներ, եթե օգնության կարիք ունեք ձեր դեղերի վճարման համար:



Հիվանդների կառավարման ծրագիր (Patient Management Program, PMP)

Meijer Specialty Pharmacy-ն ձեզ կկրթի ձեր յուրահատուկ հիվանդության և հավանական երկրորդական վիճակների կամ ախտանիշների մասին:



24/7 դեղագործի աջակցություն

Դեղագործի հասանելիություն օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:



Վերալցավորման հիշեցումներ

Meijer Specialty Pharmacy-ն կդիմի ձեզ՝ հիշեցնելու ձեր վերալցավորումների ժամանակը:



Սննդային աջակցություն

Meijer-ի գրանցված սննդագետները վիճակին հատուկ աղբյուրներ և բաղադրատոմսեր են մատուցում օգնելու, որ ավելի առողջ ապրեք: Հավելյալ տեղեկության համար ձեր բջջայինի տեսախցիկով սկանավորեք QR այլագիրը կամ այցելեք մեր կայքը:



Տեքստային հաղորդագրություն

Միանալու համար ձեր բուժմանը վերաբերող օգտակար հաղորդագրությունների, ձեր բջջայինի տեսախցիկով սկանավորեք QR այլագիրը կամ «join» տեքստն ուղարկեք 75049 համարին:

Մեր ծրագիրը կարող է օգնել, որ ձեր դեղերն ընդունեք ճիշտ, կառավարեք կողմնակի ազդեցությունները և հասկանաք ձեր բուժումը: Բացի այդ, կարող եք օրը 24 ժամ այցելել մեր կայքը՝ meijerspecialtypharmacy.com:

Մենք անհամբեր սպասում ենք ձեզ տալու հնարավոր լավագույն ծառայությունը: Ուրախ ենք, որ ընտրել եք Meijer-ը:

Շնորհակալություն:

Ձեր Meijer Specialty Pharmacy խումբը

Ինչ ակնկալել

Մենք գիտենք, որ շարունակվող վիճակի կամ ծանր հիվանդության կառավարումը կարող է դժվար լինել: Մենք նաև հասկանում ենք, որ ձեր բժշկական վիճակը պահանջում է, որ ունենաք հատուկ գիտելիքներ և պատրաստություն: Meijer Specialty Pharmacy-ն նվիրված է ձեզ և ձեր բժիշկների հետ աշխատելուն, որպեսզի օգնի ձեր որակավոր խնամքի ստացմանը:

- **Հիվանդի անհատականացված խնամք.** Մեր խմբի անդամները կմշակեն և ձեզ հետ կքննարկեն ձեր բուժման ծրագիրը: Մենք կպատասխանենք ձեր ունեցած բոլոր հարցերին և մտահոգություններին:
- **Համագործակցություն ձեր բժշկի հետ.** Մենք կաշխատենք ձեզ և ձեր առողջական խնամքի բոլոր անդամների հետ: Meijer Specialty Pharmacy-ն կօգնի ձեր խնամքը համակարգել ձեր բժիշկների հետ և լուծել բոլոր խնդիրները, որոնք կարող են ունենալ ձեր բուժման կապակցությամբ:
- **Պարբերական հետադիմ.** Ձեր դեղերի և պաշարների արագ և հեշտությամբ ստացումը կարևոր է: Մեր հիվանդների խնամքի խումբը ձեր բուժման ընթացքում սերտորեն կաշխատի ձեզ հետ:
- **Ապահովագրական նպաստներ.** Բուժումը կարող է թանկ լինել: Մենք կօգնենք, որ թիվարեք առողջական խնամքի համակարգի միջոցով՝ բացահայտելու ձեզ հասանելի ընտրանքները: Ապահովագրական ընկերությունների հետ մեր հարաբերությունները կօգնեն մեզ, որ ձեզ տանք ձեր դեղերին և բժշկական նպաստներին վերաբերող տեղեկություններ և բացատրություններ:
- **Խանութից վերցնելը.** Որտեղ տրամադրելի է, մասնագիտացված դեղերի մեծ մասի համար մենք ձեր նախընտրած Meijer Pharmacy-ի վայրում առաջարկում ենք խանութից վերցնելու հարմարությունը: Մի շարք դեղեր պահանջում են հատուկ մոտեցում և թերևս առկա չլինեն խանութից վերցնելու համար, բայց կարող են փոստով անվճար առաքվել ձեր տուն:
- **24/7 աջակցություն.** Մեր խումբը հասանելի է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Մենք միշտ այստեղ ենք պատասխանելու ձեր ունեցած բոլոր հարցերին կամ մտահոգություններին 1-855-263-4537 համարով:
- **Համավճարի և նյութական օգնության ծրագրեր.** Մենք կօգնենք, որ ձեզ մատչելի լինեն ծրագրեր, որոնք կարող են նվազեցնել ձեր ծախսերը: Այս ծրագրերը ներառում են արտադրողի համավճարային օգնություն և նյութական օժանդակություն հիմնադրամներից: Օգնություն ստանալու համար, Meijer-ը պետք է քննի, օգտագործի և այդ ծրագրերի հետ կիսի ձեր պաշտպանված առողջական տեղեկությունները (PHI): Պարտավոր չեք համաձայնել լիազորման, և մենք չենք մերժի բուժում, վճարում, գրանցում կամ նպաստների համար իրավասություն: Այնուամենայնիվ, լիազորություն չտալու դեպքում, մենք չենք կարողանա օգնել, որ օգնություն ստանաք այդ ծրագրերից: Եթե ունեք որևէ հարց, խնդրում ենք զանգահարել 1-855-263-4537 համարով:

Meijer-ի հիվանդի իրավունքները ۶ պարտավորությունները

Meijer Specialty Pharmacy-ի հիվանդն իրավունք ունի.

- Դեղը գնելուց առաջ իմանալու իր ծախսաբաժինը: Սա կտրվի բերանացի կամ գրավոր: Դուք նաև իրավունք ունեք իմանալու հիվանդների կառավարման ծրագրի մասին:
- Դեղատան անձնակազմին ճանաչելու անվանակիր կրծքանշանով և աշխատանքային տիտղոսով: Խնդրանքի դեպքում կարող եք խոսել դեղագործի հետ:
- Ընտրելու առողջապահական մատակարար և խնդրանքով խոսելու առողջապահական մասնագետի հետ:
- Տեղեկություն ստանալու դեղատան մատուցելիք ծառայությունների և այդ ծառայությունների որևէ սահմանափակման մասին, եթե կիրառելի է:
- Խնդրանքով ստանալու սահմանված կարգի մասին ապացույցով հիմնավորված տեղեկություններ կլինիկական որոշումների համար (արտադրողի փաթեթի ներդիր, սահմանված կարգի հրապարակված ուղեցույցներ, հավասարակիցների կողմից վերանայված հանդեսներ, և այլն), ներառյալ՝ մակարդակը ապացույցի կամ համախոհության, որը նկարագրում է միջամտական գործընթացը այն դեպքերում, երբ կա ապացույցով չհիմնավորված հետազոտություն, հակասող ապացույց, կամ ապացույցի ոչ մի մակարդակ:
- Ունենալու հարգալիք վերաբերում ձեր գույքի և անձի նկատմամբ, և ճանաչում՝ ձեր արժանապատվության և անհատականության:
- Ազատ լինելու անարդար վերաբերումից, անտեսումից, կամ բերանացի, հոգեկան, սեռական և ֆիզիկական բռնությունից, ներառյալ՝ անհայտ աղբյուրից վստածաբեկների և գույքի գողության:
- Վրտահայտելու բողոքներ/գանգատներ բուժման կամ խնամքի, գույքի նկատմամբ հարգանքի բացակայության մասին, կամ հանձնարարել քաղաքականության, անձնակազմի կամ ծառայության փոփոխություններ առանց կաշկանդումի, միջամտության, հարկադրանքի, խտրականության կամ վրեժխնդրության:
- Ունենալու բողոքներ/գանգատներ տրամադրված (կամ չտրամադրված) արտադրանքների, կամ հետաքննվող գույքի նկատմամբ հարգանքի բացակայության վերաբերյալ:
- Մասնակցելու որոշումների, որոնք վերաբերում են կատարվելիք որևէ ընթացակարգի և այն կատարող անձի, հնարավոր այլընտրանքների և/կամ առնչվող վտանգների, ինչպես նաև ծառայությունների ամբողջությունը կամ մի մասը մերժելու և ընթացիկ տվյալների վրա հիմնվելով որևէ այդպիսի գործողությունից սպասվող հետևանքների մասին տեղեկացված լինելու ձեր իրավունքին:
- Խորհրդապահությանը և գաղտնիությանը հիվանդի արձանագրության մեջ ընդգրկված բոլոր տեղեկությունների, և Պաշտպանված առողջական տեղեկությունների: Անձնական առողջության տեղեկությունները կկիսվեն Յիվանդների կառավարման ծրագրի հետ միայն նահանգային և դաշնային օրենքների պահանջի համաձայն:
- Տեղեկություններ ստանալու այն մասին, թե ում հետ և երբ են կիսվել ձեր անձնական առողջության տեղեկությունները, ինչպես թույլատրվում է կիրառելի օրենքի ներքո և ինչպես հատկապես նշվել է ընկերության քաղաքականությունների և ընթացակարգերի մեջ:
- Տեղեկացված լինելու կլինիկական արձանագրությունների բացահայտման վերաբերյալ Meijer-ի քաղաքականությունների և ընթացակարգերի մասին:
- Ստանալու համապատասխան խնամք, որը հետևում է ձեր բժշկի հրահանգներին՝ առանց խտրականության:
- Տեղեկացված լինելու որևէ նյութական նպաստի մասին՝ մի կազմակերպության ուղղորդվելու դեպքում, եթե կիրառելի է:
- Ծառայությունների մատուցումից առաջ ստանալու ամբողջական բերանացի կամ գրավոր տեղեկություններ Medicare-ից կամ ուրիշ վճարողներից ակնկալված վճարումների, ձեր վճարելիք ծախսերի մասին, ինչպես նաև բացատրություն՝ ձեր ստորագրության համար ներկայացված բոլոր ձևաթղթերի վերաբերյալ:
- Ցանկության դեպքում, ուղղորդվելու մի այլ առողջական խնամքի մատակարարի՝ մի այլ առողջական խնամքի համակարգում (ինչպես, օրինակ՝ մի այլ սննդագետ, ցավի մասնագետ, հոգեկան առողջության ծառայության մատակարար): Չնարավոր է, որ ձեզ ետ ուղղորդեն ձեր սեփական դեղատոմս նշանակողին:
- Օգնություն ստանալու ծրագրերից, որոնց իրավասու եք և որոնք օգնում են հիվանդների կառավարման ծառայությունների, արտադրողների համավճարների և հիվանդների օգնության ծրագրերի կապակցությամբ, ինչպես նաև առողջապահական ծրագրի ծրագրերից (ինչպես, օրինակ՝ ծխախոտի դադարեցման ծրագրեր, հիվանդության կառավարում, ցավի կառավարում, ինքնասպանության կանխարգելման/վարքագծային առողջության ծրագրեր):
- Օգնություն ստանալու մի ընկերոջից կամ ընտանիքի անդամից ձեր խնամքի, բուժման և/կամ ծառայողական որոշումների կապակցությամբ: Մի շարք իրավիճակներ կարող են ձեզանից լիազորագրի ստորագրություն պահանջել:

Meijer-ի հիվանդի իրավունքները ۞ պարտավորությունները (շարունակված)

- Ունենալու իրավունքը չմասնակցելու, չեղարկելու մի համաձայնություն կամ որևէ պահի իրաժարվելու Meijer Specialty Pharmacy-ի ծառայություններին:
- Տեղեկացված լինելու մեզ հասնելու եղանակի մասին, երբ փակ ենք: Մեր հիվանդների խնամքի խումբը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 9:00-ից 22:00-ը և շաբաթ օր 9:00-ից 17:00-ը, Արևելյան ստանդարտ ժամանակով: Մենք փակ ենք կիրակի օրերին և գլխավոր տոներին: Meijer Specialty Pharmacy-ի հեռախոսահամարն է 1-855-2MEIJER (1-855-263-4537): Եթե կարիք ունեք մեզ հասնելու աշխատանքային ժամերից հետո, զանգահարեք 1-855-263-4537 համարով՝ կապվելու մեր հերթապահող դեղագործի հետ:
- Իմանալու մեր ծառայություններում մեր կատարած բոլոր փոփոխությունների մասին՝ փոփոխությունը կատարվելուց առաջ կամ եթե դադարեցնենք մատուցումը հիվանդների կառավարման ծրագրի, որին մասնակցում եք:
- Օգնելու մեզ, որ մշակենք և փոխենք ձեր խնամքի ծրագիրը/ծառայությունները:
- Meijer Specialty Pharmacy-ի որևէ ծառայության չմասնակցելու, ձեր նախնական համաձայնությունը չեղարկելու կամ գրանցումը դադարեցնելու որևէ պահի:

Meijer Specialty Pharmacy-ի հիվանդն ունի պարտավորությունը.

- Հետևելու իր բժշկի կողմից ստեղծված բուժման ծրագրին կամ ծառայության: Հայտնելու իր բժշկին Meijer Specialty Pharmacy-ի հիվանդների կառավարման ծրագրին իր մասնակցության մասին:
- Ներկայացնելու ճշգրիտ և ամբողջական տեղեկություններ իր անցյալ և ներկա բժշկական պատմության, իր հետ շփվելու տվյալների մասին, և մեզ հայտնելու այս տեղեկություններում կատարված որևէ փոփոխության մասին:
- Համաձայնելու ծառայությունների ժամանակացույցի և զեկուցելու որևէ բուժման ջնջման մասին:
- Ներկայացնելու օրինականորեն պահանջված ձևաթղթերը, որոնք անհրաժեշտ են ծրագրին մասնակցելու համար:
- Օգնելու, որ ստեղծենք և արդիականացնենք իր խնամքի ծրագիրը:
- Հայտնելու, երբ չի հասկանում իր բուժումը կամ խնամքը, կամ երբ հարցեր ունի դրանց մասին:
- Հետևելու իր խնամքի ծրագրին և իր առողջական խնամքի մատակարարների հանձնարարություններին:
- Ընդունելու պատասխանատվություն իր արարքների համար: Եթե չեք հետևում ձեր խնամքի ծրագրին կամ ձեր առողջական խնամքի մատակարարների հանձնարարություններին, պարտավոր եք մեզ հայտնել, որպեսզի իմանանք:
- Հարգելու մեր դեղատան խմբի անդամների ունեցած իրավունքները:
- Հայտնելու իր բժշկին և դեղատան իր բուժումից առաջացած կողմնակի ազդեցությունների կամ բարդությունների, կամ իր բուժման կամ ապահովագրական ծածկույթի փոփոխությունների հետևանքով ունեցած փորձառության մասին:
- Հայտնելու իր դեղատոմսի կամ ապահովագրական ծածկույթի փոփոխությունների մասին, երբ այդպիսի կատարվեն:
- Անհապաղ հայտնելու մեզ, երբ փոխվում է իր հասցեն կամ հեռախոսը, նույնիսկ եթե միայն ժամանակավոր է դա:

Եթե ունեք մտահոգություններ, որոնք պահանջում են Meijer-ի Հաճախորդի սպասարկման օգնությունը, խնդրում ենք զանգահարել 1-855-2MEIJER (1-855-263-4537) համարով:

Տեղեկություններ հիվանդների համար

Ինչպես դիմել Meijer Specialty Pharmacy-ի Հավատարմագրման կազմակերպություններին, անհրաժեշտության դեպքում՝

Տեղեկություններ Առողջական խնամքի հավատարմագրման հանձնաժողովի (Accreditation Commission for Health Care, ACHC) գանգատների մասին

Հեռախոս՝ (855) 937-2242 | Կայք՝ <http://achc.org/contact>

Տեղեկություններ Օգտագործման վերանայման հավատարմագրման հանձնաժողովի (Utilization Review Accreditation Commission, URAC) գանգատների մասին

Հեռախոս՝ (202) 216-9010 | Կայք՝ <http://urac.org/contact/file-a-grievance/>

Տեղեկություններ Միջիգանի Դեղատների խորհրդի գանգատների (Board of Pharmacy Complaint) մասին

Department of Licensing and Regulatory Affairs Corporations, Securities & Commercial Licensing Bureau

P.O. Box 30018, Lansing, MI 48909

Հեռախոս՝ (517) 241-7000 | Կայք՝ <http://michigan.gov/lara/file-complaint>

Տեղեկություններ Կալիֆորնիայի Դեղատների խորհրդի գանգատների մասին

California Board of Pharmacy, Department of Consumer Affairs 1625 N. Market Blvd, Suite N219, Sacramento, CA 95834

Հեռախոս՝ (916) 574-8618 | Կայք՝ http://www.pharmacy.ca.gov/consumers/complaint_info.shtml

Տեղեկություններ Նյու Յորք նահանգի գանգատների մասին

New York State Education Department, Office of the Professions, Office of Professional Discipline, 1411 Broadway, Tenth Floor, New York, NY 10018

Հեռախոս՝ (800) 442-8106 | Կայք՝ <http://www.op.nysed.gov/opd/> | Էլ. փոստ՝ Conduct@nysed.gov

Մասնագիտացված դեղատների կարիքներ

- Խնդրում ենք գանգահարել ձեր Meijer Specialty Pharmacy 1-855-263-4537 համարով՝ ձեր դեղերի վերաբերյալ հարցերով և/կամ մտահոգություններով: Եթե ձեզ պետք է աշխատանքային ժամերից հետո հասնել մեզ, գանգահարեք 1-855-263-4537 համարով՝ դեղագործին հասնելու համար: Մեր հիվանդների խնամքի խումբը հասանելի է՝ երկուշաբթիից ուրբաթ, 9:00-ից 22:00-ը Արևելյան ստանդարտ ժամանակով, շաբաթ 9:00-ից 17:00-ը Արևելյան ստանդարտ ժամանակով: Փակ ենք կիրակի օրերին և գլխավոր տոներին:
- Խնդրում ենք գանգահարել մեզ, եթե ունեք հարցեր կամ մտահոգություններ ձեր պատվերի կարգավիճակի, համավճարի գումարի, կամ ապահովագրական պահանջների և նպաստների ծածկույթի մասին: Եթե ունեք որևէ կողմնակի ազդեցություն ձեզ տրված դեղի նկատմամբ, հայտնեք ձեր բժշկին կամ դեղագործին:
- Մեր դեղագործները աշխատանքային ժամերից հետո հասանելի են արտակարգ իրավիճակների և կլինիկական իրավիճակների համար, որոնք չեն կարող սպասել մինչև սովորական աշխատանքային ժամերը, ինչպես՝ կողմնակի ազդեցությունները, ձեր դեղի համար օգնությունը և գանգատի լուծումը:

Դեղատոմսային դեղերի պատվիրումը Meijer Specialty Pharmacy-ի միջոցով

- Ձեզ դեղատոմս նշանակողը վավերական դեղատոմս պետք է ուղարկի մեր դեղատուն: Երբ թղթածրարում առկա է վավերական դեղատոմս, կարող եք սովորական աշխատանքային ժամերի ընթացքում գանգահարել մեր դեղատուն՝ ձեր պատվերը տեղադրելու և առաքումը դասավորելու համար:
- Շատ դեպքերում, ձեզ դեղատոմս նշանակողը կարող է ձեր դեղատոմսը մեզ ուղարկել Էլեկտրոնային միջոցով, \$աքսով կամ հեռախոսով: Վերահսկվող նյութերի դեղատոմսերը և նահանգային օրենքները թերևս չթույլատրեն \$աքսով կամ հեռախոսով ներկայացված դեղատոմսեր մի շարք իրավիճակներում: Եթե ձեզ դեղատոմս նշանակողը ձեզ է տալիս թղթյա դեղատոմսի բնօրինակը, պարտավոր եք այն բերել կամ փոստով ուղարկել մեր դեղատուն՝ նախքան մենք կարողանանք դեղը տրամադրել:
- Հնարավոր է, որ ձեր դեղատոմսը լցավորվի անմակնիշ (ջեներիկ) համազորով, հիմնված՝ նահանգային օրենքի կամ համազորության վարկանիշի վրա: Խնդրում ենք դեղագործին հարց տալ, եթե ունեք որևէ հարց կամ մտահոգություն:
- Մեր հիվանդների խնամքի խումբը ձեզ կտեղեկացնի, եթե Meijer Specialty Pharmacy-ն անկարող լինի լցավորել ձեր դեղը: Խնդրում ենք հետո, մենք կօգնենք պարզել, թե որտեղ կարող է առկա լինել ձեր դեղը:

Տեղեկություններ հիվանդների համար (շարունակված)

- Մենք ձեզ կհայտնենք, եթե ձեր դեղատոմսային դեղը կարող է ուշանալ, ինչը կարող է տեղի ունենալ, եթե ձեր դեղը պահանջում է Նախօրոք լիազորում, ձեր ապահովագրական ընկերությունը սահմանափակում է ձեր ստանալիք դեղի քանակը, կամ մենք պետք է պատվիրենք ձեր դեղը: Մենք կաշխատենք ձեզ և ձեզ դեղատոմս նշանակողի հետ՝ հնարավորինս արագ փորձելու և ձեռք բերելու որևէ անհրաժեշտ Նախօրոք լիազորում: Եթե ձեր ապահովագրական ընկերությունը քանակային սահմանափակման կանոնի բացառություն չի անում, մենք ձեզ կամ ձեզ դեղատոմս նշանակողի հետ կաշխատենք՝ որոշելու ձեզ անհրաժեշտ դեղն ստանալու լավագույն եղանակը:

Դեղատոմսային դեղերի ստացումը Meijer Specialty Pharmacy-ից

- Ձեր դեղն սպառվելուց մոտ մեկ շաբաթ առաջ, մենք կգանգահարենք ձեզ՝ հերթադրելու ձեր հաջորդ վերալցավորման պատվերը:
- Եթե ձեր դեղը մոտեցել է սպառվելու և մենք չենք գանգահարել ձեզ, կամ եթե ավելի շուտ եք ցանկանում վերալցավորումը, խնդրում ենք մեզ դիմել: Պատրաստի ունեցե՞ք Ձեր դեղատոմս(եր)ի համար(ներ)ը՝ ձեր պատվերը տեղադրելու համար:
- Եթե ձեր դեղատոմսային դեղի կարիքն ունեք անմիջապես, խնդրում ենք մեզ տեղեկացնել: Եթե չեք կարող սպասել, կարող եք խնդրել, որ ձեր դեղատոմսը փոխանցվի մի տեղական դեղատուն: Դեղատոմսը սովորաբար կարող է ետ փոխանցվել Meijer Specialty Pharmacy, երբ հաջորդ անգամ այն անհրաժեշտ լինի:

Դեղատոմսային դեղի արժեքը

- Meijer Specialty Pharmacy-ն ընդունում է վճարագրեր, կանխիկ, դրամական պատվերներ և բոլոր գլխավոր վարկաբարտերը: Եթե ձեր վճարումը փոստով ուղարկեք մեզ, կանխիկ մի ուղարկեք:
- Դեղերի գները փոխվում են առօրյա դրությամբ: Մենք ձեր դեղի արժեքը չենք կարող իմանալ քանի դեռ ընթացքի մեջ չի դրվել: Կարող եք Նաև գանգահարել ձեր դեղատոմսային դեղերի ապահովագրության քարտի դարձակողմում գտնվող հեռախոսահամարով՝ Նորագույն տեղեկությունն ստանալու համար:
- Եթե ունեք Medicare-ի D Մասի դեղերի ծածկույթ, ձեր դեղատոմսային դեղի արժեքը կփոխվի ձեր նվազեցի գումարի, սկզբնական համավճարի և գրպանից վճարվող ընդհանուր ծախսերի բավարարման հետ: Մենք կարող ենք օգնել ձեզ ձեր ընտրանքների կապակցությամբ:
- Եթե ձեր ապահովագրական ընկերությունը Meijer Specialty Pharmacy-ն համարում է արտացանցային դեղատուն, կարող եք մեզանից խնդրել, որ գրավոր բացատրություն տանք դեղի արժեքի մասին:
- Եթե չեք կարող վճարել ձեր դեղատոմսային դեղի արժեքը, մենք կօգնենք մատնացույց անել բարեսիրական կազմակերպություններից թերևս ձեզ հասանելի նյութական օգնություն կամ այլ աջակցություն:

Հիվանդների կառավարման ծրագիր

- Հիվանդների կառավարման ծրագիրը անվճար ներառված է ձեզ համար, երբ որպես հիվանդի գրանցվում եք Meijer Specialty Pharmacy-ում: Կարող եք որևէ ժամանակ հրաժարվել՝ գանգահարելով դեղատուն:
- Դեղագործները կօգնեն ձեզ լուծում գտնել խնդիրների, մտահոգությունների կամ հարցերի, որոնք կապված են ձեր բուժմանը: Թեմաները, որոնք մեր դեղագործները կարող են քննարկել ձեզ հետ, ներառում են ընդհանուր ակնարկ ձեր վիճակի, դեղերի, դեղաչափերի, ձեր դեղերի ընդունման ժամանակի և եղանակի, մեղքի և դեղերի հետ փոխազդեցությունների, կողմակի ազդեցությունների, ֆիզիկական գնահատումների մասին, և ձեր առողջական խնամքի մասնագետների հետ խնամքի համակարգում:
- Մեր Հիվանդների կառավարման ծրագիրը նախատեսված է օգնելու ձեզ, որ կառավարեք կողմակի ազդեցությունները, ջանաք բարելավել ընդհանուր առողջությունը, բարելավեք ձեր դեղերի մասին ձեր գիտելիքները՝ կրթության և իրազեկման միջոցով, և բարելավեք դեղերի համաձայնեցումը: Երբ անհրաժեշտ է խնամքը համակարգել ձեր բժշկի հետ, ձեր դեղագործը ձեր մասին կունենա տեղեկություն, որը կօգնի կայացնել տեղեկացված որոշումներ, թե որն է լավագույնը ձեզ համար:
- Մեր Հիվանդների կառավարման ծրագրի արդյունավետությունը կախված է ձեր ներգրավվածությունից: Դուք պատրաստակամ պետք է լինեք հետևելու ձեզ դեղատոմս նշանակողի և ձեր դեղագործի խորհրդին և հանձնարարություններին, ձեր դեղերն ընդունելու ինչպես նշանակված են, և ձեր վիճակի, բժշկական պատմության և ընթացիկ սովորությունների մանրամասնությունները քննարկելու, որպեսզի ձեր դեղագործը հստակ պատկերացում ունենա ձեր իրավիճակի մասին:

Տեղեկություններ հիվանդների համար (շարունակված)

- Ձեզ դեղատոմս նշանակողին հայտնեք, որ դուք Meijer Specialty Pharmacy-ի հիվանդներից եք և գրանցվել եք Հիվանդների կառավարման ծրագրում: Ձեզ դեղատոմս նշանակողի և դեղագործի միջև լավ հարաբերությունը կարևոր է որակյալ խնամքի համար:

Գանգատի ընթացակարգ

Դուք իրավունք և պարտավորություն ունեք տեղեկացնելու մեզ մտահոգությունների, դժգոհությունների մասին, կամ գանգատվելու ձեր ստացած կամ չստացած ծառայությունների մասին՝ առանց վրեժխնդրության կամ ծառայությունների ընդհատման վախի: Եթե գանգատ ունեք, գանգահարեք մեզ 1-855-263-4537 համարով:

Գանգատ խտրականության դեմ

Meijer Specialty Pharmacy-ն հետևում է բոլոր կիրառելի Դաշնային քաղաքացիական իրավունքների օրենքներին և խտրականություն չի գործադրում ցեղի, գույնի, ազգային ծագման, տարիքի, հաշմանդամության կամ սեռի հիման վրա: Մենք մարդկանց չենք բացառում կամ տարբեր վերաբերում ցույց չենք տա ձեզ ցեղի, գույնի, ազգային ծագման, տարիքի, հաշմանդամության կամ սեռի պատճառով: Խնդրում ենք տեսնել Գաղտնիության գործելակերպերի մասին ծանուցագիրը: Եթե խտրականության հետ կապված գանգատ ունեք, գանգահարեք մեր դեղատոմս քաղաքացիական իրավունքների համակարգողին 1-800-543-3704 համարով:

Դեղերի կողմնակի ազդեցություններ

Եթե ենթարկվեք ձեր դեղերի որևէ կողմնակի ազդեցության, հայտնեք ձեզ դեղատոմս նշանակողին կամ գանգահարեք Meijer Specialty Pharmacy 1-855-263-4537 համարով:

Զօգտագործված դեղերի պատշաճ հեռացում

Զօգտագործված դեղերի հեռացման եղանակի մասին տեղեկությունների համար գանգահարեք դեղատոմս կամ գնացեք ստորև նշված կայքերը:

- <http://www.fda.gov/forconsumers/consumerupdates/ucm101653.htm>
- <http://www.fda.gov/drugs/resourcesforyou/consumers/buyingusingmedicinesafely/ensuringsafeuseofmedicine/safedisposalofmedicines/ucm186187.htm>
- Մենք կշփվենք ձեզ հետ, եթե ձեր դեղի ետ կանչվելը ազդում է ձեզ:

Արտակարգ իրավիճակների պատրաստվածության մասին տեղեկություններ

Meijer Specialty Pharmacy-ն ծրագիր ունի՝ աղետի պատահման դեպքում: Աղետները ներառում են հրդեհ մեր հաստատությունում, քիմիական արտահոսքեր, եղանակային նշանակալից իրադարձություններ և տարհանումներ: Մեր նպատակն է շարունակել ծառայել ձեր կարիքներին: Եթե կա աղետի կամ վատ եղանակի վտանգ, շփվեք մեզ հետ որևէ դեղի համար, որի կարիքը ունեք, որպեսզի անպայման ունենաք բավականաչափ:

Հետևեք ձեր տարածքի իշխանությունների ցուցումներին: Meijer Specialty Pharmacy-ն կօգտագործի հասանելի բոլոր աղբյուրները, որպեսզի շարունակի երաշխավորել ձեզ ծառայելու կարողությունը: Թեև քիչ հավանական է, կարող է պատահել, որ չկարողանաք բավարարել ձեր կարիքները արտակարգ իրավիճակի պատճառով: Այդպիսի իրավիճակներում, դուք պետք է օգտագործեք ձեր տեղական փրկարար կամ բժշկական հաստատությունը: Խնդրում ենք ընթերցել ստորև գտնվող ուղեցույցը, որպեսզի օգնի ձեզ արտակարգ իրավիճակի կամ աղետի դեպքում:

- Եթե ապրում եք մեր տեղական Meijer դեղատներից մեկի մոտակայքում և այնտեղից եք վերցնում ձեր դեղերը, և դեղատոմսը չի կարող ձեր դեղը հասցնել ձեզ, մենք ձեր դեղը կփոխանցենք որևէ այլ մոտակա Meijer Pharmacy կամ ձեր ընտրած որևէ այլ դեղատոմս:
- Եթե չենք կարողանում հասնել ձեզ կամ դուք չեք կարող դեղատոմս հասնել, խնդրում ենք օգնության համար լսել ձեր տեղական լուրերը:
- Համոզվեք, որ ունենեք արտակարգ իրավիճակների համար ձեզ հետ շփվելու հեռախոսահամար, որպեսզի կարողանաք հասնել ձեզ:

Տան անվտանգության մասին տեղեկություններ

Մենք ցանկանում ենք, որ ուշադրություն դարձնեք ձեր տանը և պահպանեք անվտանգ սովորություններ: Անվտանգ եղանակը միշտ ճիշտ եղանակն է բաներ անելու: Դյուրանցումները կարող են վնասել: Ուղղեք անապահով վիճակները՝ Նախքան դրանց կողմից վթար առաջանալը: Պատասխանատվություն ստանձնեք: Ձեր տունն անվտանգ պահեք: Ձեռքի տակ պահեք արտակարգ իրավիճակների հեռախոսահամարները:

Տեղեկություններ հիվանդների համար (շարունակված)

Դեղեր

- Դեղերն ու թոյլները միշտ պահեք երեխաների և կենդանիների հասողությունից հեռու:
- Ձեր դեղը պահեք իր բուն, պիտակավորված անոթում, որի մեջ էր դա տրվել ձեզ:
- Ձեր դեղը մի տվեք ուրիշի և մի ընդունեք ուրիշի դեղը:
- Դեղ առնելիս կամ տալիս, ընթերցեք պիտակը և ուշադիր չափեք դեղաչափերը: Իմացեք ձեր ընդունած դեղի կողմնակի ազդեցությունները:

Շարժունակության առարկաներ

Ձեռնափայտեր, քայլակներ, անվասայլակներ կամ անթացուպեր օգտագործելիս, զգույշ եղեք՝ սայթաքումներն ու անկումները կանխելու համար:

- Չզույշ եղեք, խուսափելու սահուն կամ թաց մակերեսների վրա քայլակներ, ձեռնափայտեր կամ անթացուպեր օգտագործելուց:
- Միշտ անվասայլակը կամ նստովի քայլակը պահեք կասեցված դրությամբ՝ կանգնելիս կամ նստելիս:
- Կոշիկ կրեք շարժունակության առարկաներ օգտագործելիս: Փորձեք խուսափել ձեր ճանապարհին գտնվող խոչընդոտներից և փափուկ կամ անհարթ մակերեսներից:

Սայթաքումներ և անկումներ

Տանը պատահող ամենատարածված և հաճախ ամենալուրջ վթարներն են սայթաքումն ու անկումները: Ահավասիկ մի քանի բաներ, որոնք կարող եք անել՝ դրանք կանխելու համար ձեր տան մեջ.

- Կահույքը դասավորեք այնպես, որ ունենաք անարգել ուղիներ:
- Բազրիքներ տեղադրեք բոլոր աստիճանների, ցնցուղների, լոգարանների և զուգարանների համար:
- Աստիճանները պահեք ազատ և լավ լուսավորված:
- Ռետիկներ գորգեր կամ ցանցեր տեղադրեք ցնցուղների և լոգարանների մեջ:
- Լոգանքի նստարաններ կամ ցնցուղի աթոռներ օգտագործեք, եթե ունեք մկանային տկարություն, շնչահեղձություն կամ գլխապտույտ:
- Անհապաղ սրբեք բոլոր թափած ջրերը, յուղերը կամ քսուքները:
- Փակ պահեք գզրոցներն ու պահարանները:
- Տեղադրեք լավ լուսավորություն:

Բարձրացում

Եթե մի բան չափազանց մեծ է, չափազանց ծանր կամ չափազանց զանգվածեղ՝ առանձին տեղաշարժելու համար, օգնություն խնդրեք: Ահավասիկ մի քանի բաներ, որոնք կարող եք անել գոտկատեղի ցավը կամ վնասվածքը կանխելու համար.

- Լավ հավասարակշռության համար կանգնեք բեռի մոտ՝ ոտքերն իրարից հեռու:
- Ծանր առարկաներ բարձրացնելիս ծալեք ձեր ծնկները:
- Բեռը բարձրացնելիս կամ կրելիս ձեր մեջքը պահեք հնարավորինս ուղիղ:
- Բեռ կրելիս խուսափեք մարմինը պտտեցնելուց:
- Նախապես ծրագրեք և ազատ պահեք ուղին առարկաների տեղափոխման համար:

Տեղեկություններ հիվանդների համար (շարունակված)

Էլեկտրական վթարներ

Հետևեք վաղ նախազգուշացնող նշանների, ինչպես՝ գերտաքացումը, այրվածքի հոտը, կամ կայծերը: Անջատեք սարքը վարդակից և անմիջապես ստուգել տվեք այն: Ահավասիկ մի քանի բաներ, որոնք կարող եք անել էլեկտրական վթարները կանխելու համար.

- Լարերն ու էլեկտրական սարքերը հեռու պահեք ջրից:
- Լարերը վարդակին մի միացրեք գորգերի տակ, դռնատեղերի միջով կամ ջեռուցիչների մոտ: Օգտագործելուց առաջ, լ ստուգեք վնասվածքի համար:
- Երկարացման լարերը պետք է ունենան բավականաչափ մեծ մետաղալար՝ ավելի խոշոր սարքերի համար:
- Եթե ունեք կտրված վարդակ կամ լար, անմիջապես ուղղել տվեք այն:
- Վարդակները մի ծանրաբեռնեք չափազանց շատ խրոցակներով:
- Օգտագործեք եռասամ փոխարկիչներ անհրաժեշտության դեպքում:

Հրդեհ

Նախապես ծրագրեք ձեր հրդեհային փախուստն ու վարժություն արեք: Ծրագրեք ձեր տնից դուրս գալու առնվազն երկու եղանակ: Եթե ձեր հրդեհային ելքը լուսամուտի միջոցով է, համոզվեք, որ այն հեշտությամբ է բացվում: Եթե բնակարանում եք, իմացեք, թե որտեղ է գտնվում ելքի սանդուղը: Հրդեհային արտակարգ իրավիճակի դեպքում երբեք մի օգտագործեք վերելակը: Հրշեջ բաժանմունքին նախօրոք պետք է ծանուցեք, եթե ունեք հաշմանդամություն կամ հատուկ կարիքներ, որոնց մասին պետք է իմանան նրանք: Ահավասիկ հրդեհները կանխելու մի քանի բայեր.

- Տեղադրեք ծխորոշիչներ: Դրանք ձեր լավագույն վաղ նախազգուշացումն են: Հաճախակի փորձարկեք դրանք և մարտկոցը փոխեք ամեն տարի:
- Եթե կա օգտագործվող թթվածին, բաց տեսադաշտում դրեք «Ծխելն արգելված է» նշանը:
- Դեն նետեք հին թերթերը, ամսագրերն ու տուփերը:
- Պարբերաբար դատարկեք թղթազամբյուղներն ու աղբամանները:
- Մոխրամանները մի դատարկեք կամ լուցկիները մի գցեք թղթազամբյուղներում, եթե համոզված չեք, որ բոց չեն առաջացնի:
- Հաճախակի ստուգել տվեք ձեր ծխնետույզն ու բուխարին: Փնտրեք և վերանորոգեք ճաքերն ու թուլացած կրաշաղախը: Թուղթը, փայտը և գորգերը հեռու պահեք այն տարածքից, որտեղ կայծերը կարող են բախվել դրանց:
- Չզույժ եղեք տիեզերական ջեռուցիչներ օգտագործելիս:
- Ձեռուցման բարձիկներ օգտագործելիս հետևեք հրահանգներին, որպեսզի խուսափեք լուրջ այրվածքներից:
- Ձեր հնոցն ու խողովակները ստուգեք պարբերաբար: Եթե մոտակա պատերը կամ առաստաղները տաք են թվում, ավելացրեք մեկուսիչ նյութեր:
- Ձեր տանը պահեք կրակմարիչ և իմացեք ինչպես օգտագործել այն:

Տեղեկություններ հիվանդների համար (շարունակված)

Եթե հրդեհ ունեք կամ կասկածում եք հրդեհից

- Ձեռնարկեք անհապաղ քայլեր. փախուստը ձեր գլխավոր առաջնահերթությունն է:
- Անմիջապես օգնություն ստացեք: Չանգահարեք 911:
- Եթե հրշեջ սանդուղը հասանելի չէ, փակեք դուռը և ամրափակեք ճեղքերը՝ ծուխը ետ պահելու համար: Օգնության ազդանշան սովեք լուսամուտից:

Ձեռքերը պատշաճորեն լվանալը/Վարակի վերահսկում

Մանրէների և վարակների տարածումը կանխելու համար ամենից կարևոր քայլը ձեռքերի լվացումն է: Հաճախ լվացեք ձեր ձեռքերը: Անպայման լվացեք ձեր ձեռքերը ամեն անգամ, երբ՝

- Դիպչեք որևէ արյան կամ մարմնական հեղուկի:
- Դիպչեք միզանոթների, վիրակապերի, կամ այլ կեղտոտված իրերի:
- Օգտագործեք զուգարանը կամ միզանոթը:
- Եթե հազում, փռչում կամ մաքրում եք ձեր քիթը, հաճախ մաքրեք ձեր ձեռքերը:
- Ձեր ձեռքերը օճառով և ջրով մաքրելիս՝
 - Տաք ջրով թրջեք ձեր ձեռքերն ու դաստակները:
 - Օճառ օգտագործեք: Լավ փրփրացրեք և պինդ շփեք 15 վայրկյան կամ ավելի երկար:
 - Լավ պարզաջրեք ձեր ձեռքերը:
 - Լավ չորացրեք ձեր ձեռքերը:
 - Մաքուր թղթյա սրբիչ օգտագործեք ջուրն անջատելու համար:
- Ձեր ձեռքերը ախտահանիչներով (անջուր ձեռքերի մաքրիչներով) մաքրելիս՝
 - Դոնդողային արտադրանքների համար օգտագործեք մեկ քսածածկում:
 - Փրփրային արտադրանքների համար օգտագործեք գոլֆի գնդակի չափ քանակ:
 - Արտադրանքը քսեք ձեր ձեռքի ափին:
 - Ձեր ձեռքերը շփեք իրար և ծածկեք ձեր ձեռքերի և մատների բոլոր մակերեսները, մինչև դրանք չորանան:

Խտրականությունը օրենքին դեմ է

Meijer Specialty Pharmacy-ն ենթարկվում է քաղաքացիական իրավունքների մասին կիրառելի Դաշնային օրենքներին և խտրականություն չի գործադրում ցեղի, գույնի, ազգային ծագման, տարիքի, հաշմանդամության կամ սեռի հիման վրա: Meijer Specialty Pharmacy-ն անձանց չի բացառում կամ նրանց տարբեր վերաբերում չի ցուցաբերում ցեղի, գույնի, ազգային ծագման, տարիքի, հաշմանդամության կամ սեռի հիման վրա:

Meijer Specialty Pharmacy-ն

Հաշմանդամներին անվճար օգնություններ և ծառայություններ է մատուցում՝ մեզ հետ արդյունավորապես հաղորդակցվելու համար, ինչպես՝

- Ժեստերի լեզվի որակյալ թարգմանիչներ
- Գրավոր տեղեկություններ այլ ձևաչափերով (խոշոր տպատառ, ձայնագրություն, մատչելի էլեկտրոնային ձևաչափ, այլ ձևաչափեր)

Անվճար լեզվական ծառայություններ է մատուցում անձանց, ում առաջնային լեզուն անգլերենը չէ, ինչպես՝

- Որակյալ բանավոր թարգմանիչներ
- Այլ լեզուներով գրված տեղեկություններ

Եթե այս ծառայությունների կարիքն ունեք, դիմեք Դեղատան քաղաքացիական իրավունքների համակարգողին:

Եթե համոզված եք, որ Meijer Specialty Pharmacy-ն չի մատուցել այս ծառայությունները կամ այլապես խտրականություն է գործադրել ցեղի, գույնի, ազգային ծագման, տարիքի, հաշմանդամության կամ սեռի հիման վրա, կարող եք բողոք ներկայացնել հետևյալ տվյալով՝

Pharmacy Civil Rights Coordinator

2929 Walker Avenue, Grand Rapids, MI 49544

Հեռախոս՝ 1-800-543-3704 | Ֆաքս՝ 616-791-5332 | Էլ. փոստ՝ harmacycivilrights@meijer.com

Կարող եք բողոք ներկայացնել անձամբ կամ փոստով, հեռախոսով, ֆաքսով կամ Էլ. փոստով: Եթե բողոք ներկայացնելու համար օգնության կարիք ունեք, Դեղատան քաղաքացիական իրավունքների համակարգողը հասանելի է ձեզ օգնելու համար:

Կարող եք նաև քաղաքացիական իրավունքների վերաբերյալ բողոք ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և մարդու ծառայությունների նախարարության (Department of Health and Human Services) Քաղաքացիական իրավունքների գրասենյակ՝ Էլեկտրոնային միջոցով, Քաղաքացիական իրավունքների գրասենյակի գանգատների կայքամուտքի միջոցով, որը հասանելի է <https://ocrportal.hhs.gov/ocr/portal/lobby.jsf> կայքում, կամ փոստով կամ հեռախոսով, հետևյալ տվյալով՝

U.S. Department of Health and Human Services

200 Independence Avenue, SW, Room 509F, HHH Building, Washington, D.C. 20201 1-800-368-1019, 800-537-7697 (TDD)

Գանգատի ձևաթղթերը հասանելի են նաև հետևյալ կայքում՝ <http://www.hhs.gov/ocr/office/file/index.html>:

Հիվանդի լիազորագիր և ծանուցագիր տեղեկությունների բացահայտման մասին

I. Օգտագործվելիք և բացահայտվելիք տեղեկություններ

Այս լիազորագիրը թույլատրում է, որ Meijer, Inc.-ը, Meijer Stores Limited Partnership-ը, Meijer Great Lakes Limited Partnership-ը, և նրա մասնաճյուղերը (հավաքաբար՝ «Meijer») օգտագործեն և բացահայտեն իմ բժշկական արձանագրությունները և նյութական բնույթի տեղեկությունները, ներառյալ՝ բայց առանց դրանցով սահմանափակվելու՝ իմ ախտորոշումը, դեղերը և անձնական տեղեկությունները, օրինակ՝ անունը, հասցեն, սոցիալական ապահովության համարը, առողջական ապահովագրության մասին տեղեկությունները, եթե կան այդպիսիք, և ընտանեկան և եկամտային տեղեկությունները: Այս տեղեկությունները լրիվ կամ մասամբ կարող են պաշտպանված առողջական տեղեկություններ («PHI») համարվել: Ես հասկանում եմ, որ այս արձանագրությունները կարող են պարունակել տեղեկություններ, որոնք ստեղծվել են ուրիշ անձանց կամ մարմինների կողմից, ներառյալ՝ բժիշկներն ու առողջական խնամքի այլ մատակարարներ:

Եթե իմ անվան սկզբնատառերով նշեմ ներքևում գտնվող ընտրանքները, հնարավոր կլինի IV բաժնում թվարկված նպատակների համար բացահայտել տեղեկություններ, որոնք վերաբերում են թմրանյութերի և ալկոհոլի օգտագործման բուժման ծառայությունների, հոգեկան առողջության ծառայությունների, վերարտադրողական առողջության ծառայությունների, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բուժման և բուժմանը՝ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների:

Բացի այդ, ես լիազորում եմ բացահայտումը հետևյալ տեղեկություններից որևէ մեկի՝ իմ անվան սկզբնատառերը տեղադրելով ստորև.

_____ Ալկոհոլի/թմրանյութերի չարաշահման բուժում

_____ Հոգեկան առողջության մասին տեղեկություններ (բացի հոգեբուժական գրառումներից*)

_____ Վերարտադրողական առողջության ծառայություններ

_____ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ տեղեկություններ

_____ Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ

* Այս ձևաթուղթը չի կարելի օգտագործել հոգեբուժական զույգ գրառումների բացահայտման համար: Մի առանձին ձևաթուղթ պետք է օգտագործել հոգեբուժական գրառումների բացահայտման համար:

**Նյու Յորք. Մասնավորապես լիազորելով բացահայտումը իմ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին վերաբերող, ալկոհոլի և թմրանյութի բուժման կամ հոգեկան առողջության բուժման մասին տեղեկությունների, որոնք ստացողին արգելվում է վերաբացահայտել այդպիսի

տեղեկություններն առանց իմ լիազորման, բացի դաշնային կամ նահանգային օրենքների ներքո թույլատրված լինելու դեպքում: Եթե ենթարկվեմ խտրականության՝ ՄԻԱՎ-ին վերաբերող տեղեկության բացահայտման պատճառով, ես կարող եմ դիմել Նյու Յորք նահանգի Մարդու իրավունքների բաժնին (Division of Human Rights) (212) 480-2493 համարով, կամ Նյու Յորք քաղաքի Մարդու իրավունքների հանձնաժողովին (Commission of Human Rights) 212-306-7 450 համարով: Այս գործակալությունները պատասխանատու են իմ իրավունքների պաշտպանության համար:

II. Տեղեկությունների բացահայտման համար լիազորված անձինք

Այս Լիազորագիրն ստորագրելով, դուք լիազորում եք, որ Meijer-ը բացահայտի Ի-ին պարբերության մեջ նկարագրված տեղեկությունները:

III. Անձինք, ում կարելի է բացահայտումը կատարել

Meijer-ը կարող է Ի-ին պարբերության մեջ նկարագրված տեղեկությունները բացահայտել երրորդ կողմերի, որոնք մատուցում են հիվանդների աջակցության ծառայություններ, ներառյալ՝ առանց դրանցով սահմանափակվելու՝ համավճարային քարտերը, անվճար դեղերի ծրագրերը, սահմանափակ թվով դեղերի մատչելիությունը, դեղաբուժման կառավարումը, փոխհատուցման համար օգնությունը կամ հիվանդությունների վրա հիմնված աջակցության ծրագրերը: Այս երրորդ կողմերը կարող են լինել ոչ-շահույթաժողովրդական հիմնադրամներ, համավճարային քարտերի ծրագրերի կառավարմամբ զբաղվող ընկերություններ, հիվանդների օգնության կամ անվճար դեղերի ծրագրեր, կամ դեղագործական արտադրողներ կամ դեղագործական արտադրողների մասնաճյուղերը:

IV. Նպատակ

Իմ PHI-ն կարող է օգտագործվել հիվանդների աջակցության ծառայություններ ձեռք բերելու համար, ներառյալ՝ սակայն առանց դրանցով սահմանափակվելու՝ համավճարային քարտերը, անվճար դեղերը, դեղաբուժման կառավարումը, փոխհատուցման օգնությունը, կամ հիվանդությունների հիման վրա աջակցության ծրագրերը, ինչպես ղեկավարվում են նրանց կողմից, որոնք նույնացվել են III բաժնում: Այդպիսի նյութական օգնությունը կարող է ներառել համավճարների կամ իմ բուժման լրիվ կամ մասնակի ծախսերի ծածկումը:

V. Ժամկետանցման թվական

Այս լիազորագիրը կմնա գործուն, եթե չչեղարկվի իմ կողմից, մինչև Meijer Specialty Pharmacy-ի հետ իմ դարմանական հարաբերության ավարտը:

Հիվանդի լիազորագիր և տեղեկությունների բացահայտման ծանուցագիր (շարունակված)

VI. Նշումներ







Ես հասկանում եմ, որ իմ PHI-ին այս Լիազորագրի համաձայն բացահայտվելուց հետո, դաշնային օրենքի ներքո չկա որևէ երաշխիք, որ ստացող կողմը չի վերաբացահայտի իմ առողջական տեղեկությունները մի երրորդ կողմի: Որևէ այդպիսի երրորդ կողմ թերևս պարտավոր չլինի հետևել այս Լիազորագրին կամ կիրառելի օրենքին, որը կառավարում է իմ առողջական տեղեկությունների օգտագործումն ու բացահայտումը:

Ես հասկանում եմ, որ կարող եմ մերժել ստորագրել կամ կարող եմ չեղարկել (որևէ ժամանակ) այս Լիազորագիրը որևէ պատճառով և որ այդպիսի մերժումը կամ չեղարկումը չի ազդի Meijer-ի կողմից իմ բուժման սկսման, շարունակման կամ որակի վրա:

Ես հասկանում եմ, որ այս Լիազորագիրը գործուն կմնա մինչև իր ժամկետանցվելը, ինչպես նկարագրվել է վերևում կամ իմ կողմից փոստի միջոցով չեղարկման գրավոր ծանուցագրի ներկայացումը հետևյալ տվյալով՝ Meijer Specialty Pharmacy, 2929 Walker Ave NW, Grand Rapids, MI 49544, կամ ֆաքսով ուղարկումը 1-855-963-4537 համարով: Չեղարկումը անմիջապես գործուն կդառնա Meijer-ի կողմից իմ ծանուցագրի ստացումից հետո, այն բացառությամբ, որ չեղարկումը չի ազդի Meijer-ի կողմից իմ չեղարկման գրավոր ծանուցագրի ստացումից առաջ Meijer-ի կամ այս Լիազորագրում նշված այլոց կողմից այս Լիազորագրին ապավինելով կատարված բացահայտումների վրա:

VII. Ստորագրություն

Ես ընթերցել եմ և ես հասկանում եմ այս Լիազորագրի հիմնական դրույթները, և ես ունեցել եմ իմ առողջական տեղեկությունների օգտագործման և բացահայտման մասին հարցեր տալու պատեհությունը: Ստորագրելով ստորև, ես այսու, գիտակցաբար և կամովին, լիազորում եմ իմ առողջական տեղեկությունների օգտագործումը և/կամ բացահայտումը՝ վերևում նկարագրված եղանակով:

 Հիվանդի անունը	 Հիվանդի կամ ներկայացուցչի ստորագրությունը	 Ամսաթիվը
 Ներկայացուցչի իրավասության նկարագրությունը	 Հիվանդի հասցեն	 Հիվանդի ծննդյան ամսաթիվը

Ծանուցագիր գաղտնիության գործելակերպերի մասին Meijer Pharmacy և Meijer Specialty Pharmacy դեղատների համար

Այս ծանուցագիրը նկարագրում է, թե ինչպես ձեզ վերաբերող բժշկական տեղեկությունները կարող են օգտագործվել եվ բացահայտվել եվ թե ինչպես կարող եք մատչել այդ տեղեկություններին խնդրում ենք ուշադիր վերանայել:

Այս Ծանուցագիրը գործուն է 2018 թվականի հունվարի 1-ից:

Օրենքով մեզանից պահանջվում է պահպանել ձեր պաշտպանված առողջական տեղեկությունների գաղտնիությունն ու անվտանգությունը և ձեզ տեղեկություն տալ ձեր իրավունքների և պարտավորությունների մասին: Մենք պարտավոր ենք հետևել այս ծանուցագրում նշված պարտավորություններին և գաղտնիության գործելակերպերին և ձեզ տալ դրա պատճենը:

Մենք ձեր տեղեկությունները չենք օգտագործի կամ կիսի այլ կերպ, քան նկարագրված է այս գաղտնիության ծանուցագրում, եթե գրավոր մեզ չասեք, որ կարող ենք: Եթե մեզ ասեք, որ կարող ենք, կարող եք ձեր միտքը փոխել որևէ ժամանակ: Գրավոր մեզ հայտնեք, եթե փոխեք ձեր միտքը:

Ձեր գաղտնիությունը կամ ձեր առողջական տեղեկությունների անվտանգությունը վտանգվելու դեպքում, մենք ձեզ կտեղեկացնենք:

Ինչ է պաշտպանված առողջական տեղեկությունը

Որպեսզի մենք ձեզ ծառայություններ մատուցենք, մենք պետք է իմանանք և պահպանենք ձեզ վերաբերող որոշակի տեղեկություններ: Ձեր մասին մեր ունեցած տեղեկությունները, որոնք կարող են օգտագործվել ձեզ նույնականացնելու համար, պաշտպանված առողջական տեղեկություններ են: Ձեր անունը, ձեզ հետ շփվելու տվյալները և ձեր առողջության, բժշկական վիճակների և դեղատոմսերի մասին տեղեկությունները մի շարք օրինակներ են: Այս տեղեկությունները կարող են վերաբերել ձեր անցյալ, ներկայ կամ ապագա ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը կամ վիճակին, ձեզ առողջական խնամքի արտադրանքներ կամ ծառայություններ մատուցելուն, կամ մեր արտադրանքների և ծառայությունների համար ձեր վճարմանը:

Մենք կարող ենք փոխել այս ծանուցագիրը:

Մենք կարող են փոխել այս ծանուցագրի պայմանները և փոփոխությունները կտարածվեն ձեր մասին մեր ունեցած բոլոր տեղեկությունների վրա: Մենք ձեզ կտրամադրենք պատճենը վերամշակված ծանուցագրի, եթե խնդրեք մեզանից: Պատճենները առկա են դեղատանը: Մենք վերամշակված ծանուցագիրը կտեղադրենք նաև դեղատանը և մեր դեղատան կայքում Meijer.com/pharmacy:

Ձեր Իրավունքները

Դուք ունեք որոշակի իրավունքներ ձեր առողջական տեղեկությունների նկատմամբ: Ձեզ օգնելու համար մենք նշանակել են գաղտնիության մասնագետ՝ ձեր հարցերին պատասխանելու, խնդրանքներին արձագանքելու և զանգաստներ ստանալու համար: Ձեր գաղտնիության մասնագետին կարող եք դիմել:

Գրավոր՝ Meijer Privacy Specialist
2929 Walker Avenue NW
Grand Rapids, MI 49544

Ձանգահարելով՝ 1-800-543-3704, ընտրանք 2
Էլ-փոստով՝ privacyspecialist@meijer.com
Ֆաքսով՝ 1-616-791-5332

Մեզ հետ հաղորդակցվելը հեշտացնելու համար մենք ունենք խնդրանքի ձևաթղթեր, որոնք առկա են դեղատանը, բայց դրանք պարտադիր չեն:

Դուք իրավունք ունեք զանգատ ներկայացնելու, եթե կարծում եք, որ ձեր իրավունքները ոտնահարվել են: Եթե կարծում եք, որ ձեր իրավունքները ոտնահարվել են, կարող եք զանգատ ներկայացնել մեր գաղտնիության մասնագետին: Կարող եք նաև զանգատ ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և մարդու ծառայությունների նախարարության (Department of Health and Human Services) Զաղաքացիական իրավունքների գրասենյակ (Office for Civil Rights), նամակ ուղարկելով 200 Independence Avenue, S.W., Washington, D.C. 20201 հասցեով, զանգահարելով 1-877-696-6775 համարով, կամ այցելելով www.hhs.gov/ocr/privacy/hipaa/complaints/ կայքը: Մենք վրիժառույթի չենք դիմի ձեր դեմ, եթե զանգատ ներկայացնեք:

Իրավունք ունեք մեզանից խնդրելու, որ սահմանափակենք ձեզ վերաբերող մեր օգտագործած կամ կիսած տեղեկությունները: Մեզանից կարող եք խնդրել չօգտագործել կամ չկիսել որոշակի առողջական տեղեկություններ բուժման, վճարման կամ մեր գործառնությունների համար: Մենք պարտավոր չենք համաձայնել ձեր խնդրանքին: Մենք շատ հավանաբար չհամաձայնենք մի խնդրանքի, որը կարող է ազդել ձեր խնամքի վրա: Մենք պահանջում ենք, որ այդ տեսակի խնդրանքները գրավոր ներկայացնեք:

Եթե մեր ծառայությունների լրիվ ծախսերը վճարում եք ձեր գրպանից, կարող եք մեզանից խնդրել, որ այդ տեղեկությունը վճարման նպատակներով կամ մեր գործառնությունների համար չկիսենք ձեր առողջական ապահովագրության հետ: Այս խնդրանքը պարտավոր եք կատարել առանձին մեր դեղատներից յուրաքանչյուրում, նախքան մենք պահանջը կներկայացնենք ձեր առողջական ապահովագրության՝ հետևելով մեր սովորական գործառնություններին: Մենք ձեր խնդրանքին կհամաձայնենք, եթե օրենքը մեզանից չի պահանջում այդ տեղեկությունը կիսել ձեր առողջական ապահովագրության հետ:

Իրավունք ունեք մեզանից խնդրելու խորհրդապահաբար հաղորդակցել ձեզ հետ: Կարող եք խնդրել, որ ձեզ հետ շփվենք որոշակի եղանակով, ինչպես՝ ձեր տուն կամ ձեր աշխատավայրը գանգահարելով կամ փոստային առաքումը տարբեր հասցեով կատարելով: Պարտավոր եք ձեր խնդրանքը գրավոր կատարել և հայտնել, թե ինչպես կամ որտեղ կցանկանայիք շփվել ձեզ հետ: Մենք կհամաձայնենք տրամաբանական խնդրանքների, բայց արտակարգ իրավիճակի դեպքում, մենք ձեզ հետ կշփվենք այնպիսի եղանակով, որը մեր համոզումով անհրաժեշտ է և պատշաճ:

Իրավունք ունեք ստանալու էլեկտրոնային կամ թղթյա պատճենները ձեր դեղատնային արձանագրությունների և ձեր մասին մեր ունեցած այլ առողջական տեղեկությունների: Մենք ձեր առողջական տեղեկությունները պահում ենք մի նշանակված դեղատան արձանագրություններում մի որոշ ժամանակով, որն անհրաժեշտ է օրենքներին ենթարկվելու համար: Մենք ձեզ համար հեշտացնում ենք դեղատնից արագ ստացումը Բժշկական ծախսերի քաղվածքի թղթյա պատճենի, որը ցանկն է Ձեր վերջին դեղատոմսային դեղերի և դրանց համար ձեր վճարած գումարի: Կարող եք ձեր սեփական պատճենը տպել՝ օգտագործելով ձեր անձնական առցանց հաշիվը Meijer.com/pharmacy կայքում: Ձեզ անհրաժեշտ կլինի ձեր օգտանունն ու գաղտնաբառը՝ ձեր արձանագրություններին մատչելու համար:

Կարող եք նաև գրավոր խնդրանք ներկայացնելով մատչել ձեր դեղատնային արձանագրության կամ ստանալ դրա պատճենը: Մենք կարող ենք ձեզանից գանձել ծախսի վրա հիմնված մի տրամաբանական վճար: Մեզ հայտնեք՝ արդյոք ցանկանում եք թղթյա, թե՛ էլեկտրոնային պատճեն, ինչպես՝ սեղմապլակի (CD) կամ բթամատաչափ կրիչի վրա, և որտեղ և ում պետք է ուղարկենք պատճենը: Պատասխանելու համար, մենք 30 օր ունենք ձեր խնդրանքն ստանալուց հետո: Թեև անհավանական է, եթե մերժենք ձեր առողջական տեղեկություններին մատչելու կամ դրանք պատճենելու ձեր խնդրանքը, կարող եք խնդրել մերժման վերանայումը:

Իրավունք ունեք մեզանից խնդրելու ուղղել ձեր դեղատան արձանագրությունը: Եթե կարծում եք, որ ձեր տեղեկությունները թերի են կամ սխալ, մեզանից խնդրեք տեղեկությունների ուղղումը: Կարող եք խնդրել, որ դեղատունը փոխի ձեր տեղեկությունները: Եթե դեղատունը չի կարող փոխել ձեր տեղեկությունները, որոնք թերի են կամ սխալ ձեր կարծիքով, մեր գաղտնիության մասնագետից պետք է խնդրեք փոխել ձեր տեղեկությունները: Ձեր խնդրանքը պետք է ներառի ձեր խնդրանքին աջակցող պատճառ: Մենք կարող ենք մերժել ձեր խնդրանքը: Եթե մերժենք ձեր խնդրանքը, դա կլինի գրավոր՝ 60 օրվա ընթացքում: Կարող եք մեր որոշման հետ համաձայն չլինելու հայտարարություն ներկայացնել և մենք կարող ենք հերքել ձեր հայտարարությունը:

Իրավունք ունեք մեզանից խնդրել ցուցակը նրանց, ում հետ կիսել ենք ձեր տեղեկությունները: Այս ցուցակը կոչվում է հաշվետվություն և այն չի ներառի բուժումների, վճարման և առողջական խնամքի գործառնությունների վերաբերող բացահայտումներ: Հաշվետվությունից բացառվում են որոշ ուրիշ բացահայտումներ, ինչպես՝ որևէ բացահայտում, որը դուք եք մեզանից խնդրել կատարել, այնպիսիք՝ որոնք կատարվել են ուղղակի ձեզ կամ ձեր խնամքում ներգրավված մի ընկերոջ կամ ընտանիքի անդամների, և ծանուցողական նպատակների համար բացահայտումները:

Մեզ պետք է ասեք, թե որ ժամանակահատվածի համար եք ուզում ձեր հաշվետվությունը, բայց դա չի կարող վեց տարուց ավելի երկար լինել: Յուրաքանչյուր 12 ամիսը մեկ հասանելի է մեկ անվճար հաշվետվություն: Եթե խնդրեք մի այլ հաշվետվություն և 12 ամիս չի բոլորվել ձեր վերջին անվճար պատճենից հետո, մենք կարող են գանձել ծախսի վրա հիմնված տրամաբանական վճար: Մենք վճարը չենք գանձի ձեզանից, եթե ձեզ նախապես չտեղեկացնենք ծախսի մասին և ձեզ չտանք ձեր խնդրանքը ջնջելու կամ փոխելու հնարավորություն:

Իրավունք ունեք ընտրելու մեկին, ով կգործի ձեր փոխարեն: Եթե բժշկական լիազորագիր եք տալիս մի անձի, կամ մի անձ ձեր օրինական խնամակալն է, այդ անձը կարող է ձեր իրավունքները կիրառել և ձեր առողջական տեղեկությունների վերաբերյալ ընտրություններ կատարել: Որևէ գործողություն ձեռնարկելուց առաջ, մենք կհամոզվենք, որ անձն ունի այդ իրավասությունը և կարող է գործել ձեր փոխարեն:

Իրավունք ունեք որևէ ժամանակ ստանալու պատճենը այս գաղտնիության ծանուցագրի: Կարող եք որևէ ժամանակ խնդրել թղթյա պատճենն այս ծանուցագրի, նույնիսկ եթե համաձայնել եք ծանուցագրին ստանալ

Էլեկտրոնային միջոցով: Թղթյա պատճենները հասանելի են որևէ դեղատանը կամ դիմելով մեր գաղտնիության մասնագետին, և առկա են նաև Meijer.com/pharmacy կայքում:

ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԱՌՎՈՐԱԲԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԿԱՄ ԿԻՍՈՒՄ ՁԵՐ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մենք ձեր առողջական տեղեկություններն օգտագործում և կիսում ենք բուժման, վճարման և մեր գործառնությունների համար:

Բուժումը նշանակում է ձեր առողջական խնամքի մատակարարի կողմից ձեր առողջական խնամքի մատուցումը, համակարգումը և կառավարումը: Meijer-ի դեղատները առողջական խնամքի մատակարար են: Մենք կարող ենք ձեր առողջական տեղեկությունները օգտագործել և կիսել ձեզ բուժող այլ առողջական խնամքի մատակարարների հետ: Բուժման օրինակները ներառում են դեղեր տրամադրելը, մեր կողմից մատուցված խնամքին հետևելու համար ձեզ հետ կապ հաստատելը, կլինիկական ծառայություններ մատուցելը, ինչպես՝ պատվաստումները և առողջության գնման ծառայությունները, և ձեզ հետ հաղորդակցվելը հիվանդության նահանգային կառավարման ծրագրերի մասին, ժամադրության հիշեցումները, վերացված հիշեցումները, հրահանգներին հավատարմորեն հետևելու ծրագրերը, բուժման այլընտրանքները, անմակնիշ (ջեներիկ) դեղերը, մեր տրամադրած առողջապահական արտադրանքներն ու ծառայությունները, ընդհանուր առողջապահական կամ կառավարական առողջապահական ծրագրերը, որոնք կարող են հետաքրքրել ձեզ, և այլ տեղեկություններ, որոնք վերաբերում են ձեզ համար նշանակալից դեղերին կամ դեղատան խնամքին:

Ծրագրի գրանցումներ: Ձեր ընդունած մի շարք դեղեր կարող են գտնվել Վտանգի գնահատման և մեղմացման ռազմավարության (Risk Evaluation and Mitigation Strategy, REMS) ծրագրի ծիրում: REMS ծրագիրը կարող է ձեզանից պահանջել գրանցվել արտաքին ընկերության մոտ և/կամ ներկայացնել ախտորոշիչ ստուգումների արդյունքներ՝ նախքան դեղը տրամադրելը: Երբ գրանցվում կամ ստուգման արդյունքներ եք ներկայացնում, մենք կարող ենք պարտավոր լինել այդ արտաքին ընկերությունների հետ կիսել ձեր առողջական տեղեկությունները, գրանցված լինելը կամ ստուգման արդյունքները, որպեսզի շարունակենք REMS դեղը տրամադրել ձեզ:

Վճարումը նշանակում է Meijer-ի կողմից ձեռնարկված գործողություններ՝ մեր ծառայությունների դիմաց հաշիվ ուղարկելու համար: Մենք կարող ենք ձեր առողջական տեղեկությունները օգտագործել և կիսել հաշիվ ուղարկելու և վճարում ստանալու համար առողջապահական ծրագրերից կամ այլ մարմիններից: Վճարման օրինակները ներառում են ձեր առողջական ապահովագրության ծրագրի իրավասության և համավճարի կամ համապահովագրության գումարի որոշումը, ձեր ապահովագրական ծրագրից խնդրելը, որ մեզ վճարի ձեր ծառայությունների համար, պարտքերի հավաքման գործունեությունները, ինչպես նաև օգտագործման վերանայման գործունեությունները, ինչպես՝ նախահավաստագրումը կամ նախօրոք լիազորման ձեռքբերումը մեր ծառայությունների համար:

Առողջական խնամքի գործառնությունները մեր գործարարությունը վարելու համար մեր կատարած գործունեություններն են: Առողջական խնամքի գործառնությունների օրինակները, որտեղ մենք կարող ենք ձեր առողջական տեղեկությունները օգտագործել կամ կիսել, ներառում են՝ մարզում, որակի գնահատման և բարելավման գործունեություններ, առողջական խնամքի մատակարարների կատարողության վերանայում կամ հատկությունների գնահատում, օրինական ծառայություններ և համապատասխանության ծրագրեր, հաշվետուական գործառնություններ, գործարարության ծրագրման և կառավարման գործունեություններ, դեղատոմսային դեղերի պատրաստություն և ցավորման կենտրոնական դեղատան կողմից, որը պատկանում է մեզ և մենք ենք վարում, տեղեկությունների կիսում բուժման այլընտրանքների մասին, և նկարագրում առողջության հետ կապ ունեցող արտադրանքների կամ ծառայությունների, որոնք մենք ենք մատուցում: Մենք կարող ենք կանչել ձեր անունը, երբ ձեր դեղատոմսային դեղը պատրաստ է վերցվելու համար:

ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ, ՈՐՏԵՂ ԴՈՒՔ ԵՔ ԸՆՏՐՈՒՄ, ԹԵ ԻՆՉ ԵՆՔ ԿԻՍՈՒՄ

Մի շարք իրավիճակներում, կարող եք մեզ ասել ձեր ընտրությունները մեր կիսելիքի վերաբերյալ: Եթե ունեք հստակ նախընտրություն, թե ինչպես ենք կիսում ձեր առողջական տեղեկությունները ստորև նկարագրված իրավիճակներում, ասեք մեզ, թե ինչ եք ուզում, որ անենք: Եթե չեք կարող մեզ ասել ձեր նախընտրությունը, մենք կարող ենք ձեր տեղեկությունները կիսել, եթե համոզված ենք, որ դա լավագույնս կծառայի ձեր շահերին: Մենք կարող ենք նաև ձեր տեղեկությունները կիսել ըստ անհրաժեշտության, որպեսզի նվազեցնենք առողջության կամ անվտանգության վերաբերող լուրջ և վերահաս վտանգը:

Աղետային օգնություն: Մենք մասնագիտական դատողությունից օգտվելով, թե ինչը լավագույնս ծառայում է ձեր շահերին, կարող ենք ձեր առողջական տեղեկություններն օգտագործել կամ կիսել աղետային օգնության նպատակներով, ներառյալ՝ տեղեկությունների մատուցումը կազմակերպությունների, որոնք օրենքով կամ հատուկ արտոնությամբ լիազորված են օգնել աղետային օգնության ջանքերին:

Դրամահավաք: Մենք կարող ենք ձեզ դիմել դրամահավաքչական ջանքերով, բայց դուք կարող եք մեզ ասել, որ նորից չդիմենք:

Ձեր առողջական խնամքի կամ վճարման մեջ ներգրավված անհատներ: Ձեր բացակայությամբ, մեր դեղագործների և մասնագետների խումբը կօգտագործի մասնագիտական դատողություն՝ ձեր առողջական տեղեկությունները կիսելու ընտանիքի անդամի, մտերիմ բարեկամի, մտերիմ ընկերոջ, կամ որևէ անձի հետ, ում դուք ցույց եք տալիս որպես ներգրավվածի ձեր առողջական խնամքի կամ վճարման մեջ: Սա ձեզ թույլ կտա, որ մի ուրիշ անձ բերի ձեր դեղատոմսերը և ստանձնի ձեր դեղատոմսային դեղերը: Ձեր մահից հետո, մենք կարող ենք ձեր տեղեկությունները բացահայտել այն անձին, ով կամ ներգրավված էր ձեր առողջական խնամքում, կամ ունի փաստագրված իրավասություն՝ գործելու ձեր փոխարեն կամ ձեր ունեցվածքի օգտին, եթե չկա որևէ սահմանափակում:

ՁԵՐ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՐ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՄ ԿԻՍՄԱՆ ԱՅՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Մեզ թույլատրվում կամ մեզանից պահանջվում է ձեր տեղեկությունները կիսել այլ եղանակներով՝ սովորաբար այնպիսի եղանակներով, որոնք նպաստում են հանրության բարիքին, ինչպես՝ հանրային առողջապահությանը և հետազոտություններին: Մենք պարտավոր ենք բավարարել օրենքի բազմաթիվ պայմաններ՝ այս նպատակներով ձեր տեղեկությունները կիսել կարենալուց առաջ, բայց մեզ անհրաժեշտ չի լինի ձեր գրավոր լիազորումը: Ձեր առողջական տեղեկությունների մեր կողմից օգտագործման կամ կիսման այլ եղանակներ են:

Գործարարական գործընկերները: Մենք պայմանագրեր ենք կնքում վաճառողների հետ (կոչվում են գործարարական գործընկերներ), որպեսզի մեզ օգնեն իրագործել մեր ծառայությունները: Մենք կարող ենք ձեր առողջական տեղեկությունները կիսել մեր գործարարական գործընկերների հետ, որպեսզի նրանք կարողանան կատարել այն աշխատանքը, որը նրանցից խնդրել ենք անել մեզ համար:

Հանրային առողջապահության և անվտանգության գործունեությունները: Երբ թույլատրվում կամ պահանջվում է օրենքով, մենք կարող ենք ձեր առողջական տեղեկությունները կիսել հանրային առողջապահական իշխանության հետ, ինչպես՝ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնները (Centers for Disease Control and Prevention), Սննդի և դեղորայքի վարչությունը (Drug Administration, FDA), Աշխատանքային անվտանգության և առողջապահության վարչությունը (Occupational Safety and Health Administration) և նահանգային կամ տեղական առողջապահական բաժանմունքները՝ հիվանդությունների, վնասվածքների կամ հաշմանդամության կանխման կամ վերահսկման նպատակով:

Հանրային առողջապահական գործունեությունները կարող են ներառել երեխաների չարաշահման կամ անտեսման մասին հաղորդումը, FDA-ին տեղեկություններ հաղորդելը (օրինակ՝ FDA-ի կողմից կարգավորվող արտադրանքների որակի, անվտանգության կամ արդյունավետության մասին տեղեկությունները, անբարենպաստ իրադարձությունները, արտադրանքի թերությունները կամ արտադրանքի շեղումները, FDA-ի արտադրանքներին հետևելը, արտադրանքների ետ կանչումը, վերանորոգումները, փոխարինումները, հետադարձ հայացքները, կամ հետ-շուկայավարական հսկողությունը) և վարակիչ հիվանդությունների մասին ծանուցումը՝ միջամտության կամ հետաքննության համար: Եթե մենք ձեր գործատուին զեկուցենք տեղեկություններ աշխատավայրում բժշկական հսկողության հետ կապված գնահատման համար, կամ գնահատելու՝ արդյո՞ք ունեք աշխատանքի հետ կապված հիվանդություն կամ վնասվածք, մենք նախ ձեզ կտեղեկացնենք: Վարակագրեծման մասին ձեր դպրոցին տեղեկագրելը, եթե գրանցման նպատակներով պահանջվում է նահանգային օրենքով, պահանջում է ձեր համաձայնությունը:

Չարաշահման, անտեսման, կամ ընտանեկան բռնության զոհերը: Մենք կարող ենք ձեր առողջական տեղեկությունները կիսել կառավարական իշխանության հետ, ինչպես՝ սոցիալական ծառայությունը կամ պաշտպանական ծառայությունների գործակալությունը, եթե տրամաբանորեն համոզված ենք, որ դուք չարաշահման, անտեսման, կամ ընտանեկան բռնության զոհ եք: Մենք այս տեսակի տեղեկությունները կկիսենք միայն օրենքով պահանջված տարողությամբ:

Առողջապահական վերահսկման գործունեությունները: Մենք կարող ենք ձեր առողջական տեղեկությունները կիսել առողջապահական վերահսկողության գործակալության հետ՝ օրենքով թույլատրված գործունեությունների համար, ինչպես՝ հաշվետու գումարները, քննությունները, հետաքննությունները, դատական վարույթները, արտոնագրման կամ կարգապահական գործողությունները, այլ գործունեություններ, որոնք անհրաժեշտ են առողջական խնամքի համակարգի, կառավարական նպաստների ծրագրերին իրավասու լինելու, կառավարական կանոնակարգող ծրագրերի չափանիշներին ենթարկվելու և քաղաքացիական իրավունքների օրենքներին ենթարկվելու համար:

Դատական և վարչական վարույթները: Եթե ներգրավված եք դատավարության կամ վեճի մեջ, մենք կարող ենք ձեր առողջական տեղեկությունները կիսել որպես պատասխան դատարանի կամ վարչական հրահանգի: Մենք կարող ենք նաև պատասխանել դատական ծանուցման, հայտնաբերման խնդրանքի, կամ այլ օրինական գործընթացի մի այլ անձի կողմից, ով ներգրավված է վեճի մեջ, բայց միայն եթե ջանքեր էին գործադրվել խնդրանքը ձեզ հայտնելու կամ խնդրված տեղեկությունները պաշտպանելու հրաման ձեռք բերելու համար:

Իրավապահպանումը: Մենք կարող ենք ձեր առողջական տեղեկությունները կիսել իրավապահպանական նպատակներով, երբ դա պահանջվում է օրենքով, կամ պատասխանելու համար վավերական դատական ծանուցագրի կամ ուրիշ իրավական գործընթացի: Եթե իրավապահպանները մեր օգնության դիմեն, մենք կարող ենք օգնել հայտնաբերել կասկածյալի, փախստականի, նյութական վկայի կամ անհետ կորած անձի: Եթե հանցագործություն կատարեք մեր շենքում, մենք կարող ենք ձեր առողջական տեղեկությունները կիսել իրավապահպանների հետ:

Դատաքննիչները, բժշկական քննիչները և թաղմանական տնօրենները: Մենք կարող ենք ձեր առողջական տեղեկությունները բացահայտել դատաքննիչ կամ բժշկական քննիչ՝ ճանաչելու մահացած անձին կամ որոշելու մահվան պատճառը: Մենք կարող ենք ձեր առողջական տեղեկությունները կիսել թաղմանական տնօրենի հետ՝ կիրառելի օրենքի համապատասխան, իր պարտականությունների կատարման համար:

Օրգանների կամ հյուսվածքների ձեռքբերման կազմակերպությունները: Մենք կարող ենք ձեր առողջական տեղեկությունները կիսել օրգանների ձեռքբերման կազմակերպությունների կամ այլ մարմինների հետ, որոնք զբաղվում են օրգանների ձեռքբերումով, մթերումով կամ փոխպատվաստումով՝ հյուսվածքների նվիրման և փոխպատվաստման նպատակով:

Հետազոտությունները: Մենք կարող ենք ձեր առողջական տեղեկությունները կիսել հետազոտողների հետ, երբ նրանց հետազոտությունը վավերացվել է հիմնարկային վերանայման խորհրդի կամ գաղտնիության խորհրդի կողմից, որը քննել է հետազոտության առաջարկը և սահմանել է գործելակերպի կանոններ, որպեսզի երաշխավորի ձեր գաղտնիությունը, և փոխել կամ վերացրել է ձեր գրավոր լիազորության պահանջը:

Առողջությանը կամ անվտանգությանը սպառնացող լուրջ վտանգը կանխելու համար: Մենք կարող ենք օգտագործել և կիսել ձեր առողջական տեղեկությունները, երբ անհրաժեշտ է կանխելու ձեր առողջությանն ու անվտանգությանը կամ հանրության կամ այլ անձի առողջությանն ու անվտանգությանը սպառնացող մի լուրջ և վերահաս վտանգ:

Չինվորականները և վետերանները: Եթե անդամ եք զինված ուժերին, մենք կարող ենք ձեր առողջական տեղեկությունները կիսել ինչպես պահանջվում է զինվորական հրամանատարական իշխանությունների կողմից: Մենք նաև կարող ենք օտարերկրյա զինվորական անձնակազմի մասին տեղեկություններ բացահայտել համապատասխան զինվորական իշխանության:

Ազգային անվտանգության և հետախուզական գործունեությունները: Մենք կարող ենք ձեր առողջական տեղեկությունները կիսել լիազորված դաշնային պաշտոնյաների հետ՝ հետախուզական, հակահետախուզական և օրենքով լիազորված ազգային անվտանգության կապված այլ գործունեությունների համար:

Պաշտպանական ծառայությունները Նախագահի և այլոց համար: Մենք ձեզ վերաբերող տեղեկությունները կարող ենք բացահայտել լիազորված դաշնային պաշտոնյաների, որպեսզի կարողանան պաշտպանություն մատուցել Նախագահին, լիազորված այլ անձանց կամ օտար պետությունների ղեկավարներին, կամ իրականացնեն հատուկ հետաքննություններ:

Ուղղիչ հիմնարկները: Եթե ուղղիչ հիմնարկի բանտարկյալ եք կամ դառնում եք այդպիսին, մենք կարող ենք հիմնարկի կամ նրա գործակալների հետ կիսել ձեր առողջական տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են ձեր առողջության և ուրիշների առողջության և անվտանգության համար:

Ապանույնականացված տեղեկություններ: Մենք կարող ենք ձեր առողջական տեղեկությունները կիսել, եթե դրանք արդեն փոխվել են այնպիսի եղանակով, որ չեն նույնականացնի ձեզ և չեն կարող օգտագործվել ձեզ նույնականացնելու համար:

Ծանուցումներ: Մենք ձեր առողջական տեղեկությունները կարող ենք օգտագործել կամ կիսել ընտանիքի անդամի, անձնական ներկայացուցչի, կամ ձեր ինսամքի համար պատասխանատու այլ անձի ծանուցելու կամ օգնելու, որ ծանուցվի ձեր գտնվելու վայրն ու ընդհանուր վիճակը:

Պահանջվում է օրենքով: Մենք ձեր առողջական տեղեկությունները կօգտագործենք և կկիսենք, երբ մեզանից պահանջվի օրենքով:

Աշխատողների փոխհատուցում: Մենք ձեր առողջական տեղեկությունները կարող ենք կիսել այնքանով, որքանով դա թույլատրվում է և այնքանով, որքանով անհրաժեշտ է ենթարկվելու համար օրենքներին, որոնք կապ ունեն աշխատողների փոխհատուցման կամ օրենքով սահմանված այլ համանման ծրագրերի հետ:

Հավելյալ տեղեկության համար գնացեք www.hhs.gov/ocr/privacy/hipaa/understanding/consumers/index.html կայքը:

Մենք ենթարկվում ենք կիրառելի Դաշնային քաղաքացիական իրավունքների օրենքներին և խտրականություն չենք կիրառում ցեղի, գույնի, ազգային ծագման, տարիքի, հաշմանդամության, կամ սեռի հիման վրա: